

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

29.06.2020թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Գ.Մարկոսյանը -մարզպետի տեղակալ
- Ա.Մխիթարյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Վ.Խաչատրյանը -մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Սահակյանը, Հ.Գասպարյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Աղլոյանը, Ս.Գրիգորյանը, Ա.Գասպարյանը - ստորաբաժանումների ղեկավարներ
- Հ.Այվազյանը -մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական
- Ն.Հովհաննիսյանը -մարզպետի օգնական

Օրակարգում՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Փոխմարզպետ՝ Գայանե Մարկոսյան)
2. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Արթուր Մխիթարյան)
3. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին.
(Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)
4. Այլ հարցեր:

Հանձնարարվեց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա/ Մարզպետի կողմից տրված արձանագրային հանձնարարականների կատարումը պահել ուշադրության կենտրոնում և սահմանված ժամկետներում ու կարգով ներկայացնել հաշվետվություններ ու զեկուցագրեր:

բ/ 1-շաբաթյա ժամկետում մարզի զարգացման կիսամյակային մոնիտորինգի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնին:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Հ.Պապոյանին՝

ա/ Մինչև 15.07.2020թ. ներկայացնել տեղեկատվություն համայնքների կողմից բյուջեների կիսամյակային պլանի կատարման վերաբերյալ:

բ/ Ամենամյա տեղեկատվություն ներկայացնել բնակարանների գնման վկայագրերով ֆինանսավորման կատարողականի վերաբերյալ:

գ/ 1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզում սելավից տուժած քաղաքացիներին օգնություն տրամադրելու ընթացքի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

Երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն 10-րդ արձանագրության 7-րդ կետով տրված հանձնարարականի՝ մարզի տուրիստական կենտրոններով կամ կետերով անցնող ճանապարհների վիճակի վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Երկօրյա ժամկետում ներկայացնել ամբողջական տեղեկատվություն մարզում առկա սպանդանոցների գործունեության վերաբերյալ:

5. Հ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Գասպարյանին՝

1-շաբաթյա ժամկետում ներկայացնել վերջնական տեղեկատվություն մարզպետարանի կայքէջի բարելավման աշխատանքների վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության պետ Ս.Գրիգորյանին՝

Մշտական հսկողության տակ պահել Լոռու մարզի այն ընտանիքների կարգավիճակը / Թեժ Լեռի, Ստեփանավանի և այլն/, որտեղ կան ընտանեկան բռնության դեպքեր և երեխաներին վերաբերող խնդիրներ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս. Ղուբայանին՝

Ներկայացնել առաջարկություններ զորակոչի ընթացքի և ներկա պայմաններում դրա անցկացման վերաբերյալ: /ժամկետ՝ 1 շաբաթ/

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ